



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

Հ Ր Ա Մ Ա Ն

<<16>> սեպտեմբերի 2014 թ. N 803-Չ

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կենտրոնական լաբորատորիայի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 16-2.3-81/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 10-ի N 5 որոշումը և Ա.Հարությունյանի (2014թվականի սեպտեմբերի 10-ի մտ. N 3-1777) անձնական դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Արմենուհի Հարությունյանին 2014 թվականի սեպտեմբերի 16-ից նշանակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կենտրոնական լաբորատորիայի գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 16-2.3-81/ պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ռ. ՉՈՐԱՆՅԱՆ

<<16>> սեպտեմբերի 2014 թ.
ք. Երևան